ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/77

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.12.2017թ. թիվ 03/26-3/23873-17 գրությամբ «Վանի» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00412375/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 15.12.2017թ. թիվ 01/61-28081 գրության հիման վրա, 20.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Վանի» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 15.12.2017թ. թիվ 01/61-28081 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի 13.11.2017թ. որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Վանի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև 16.11.2017թ. հանձնաժողովի 16.11.2017թ. թիվ 5 արձանագրության 3-րդ կետով ընդունած որոշումը, պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել «Վանի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ուղղված գրությամբ Երևանի քաղաքապետարան ներկայացնել իր կողմից կնքված պայմանագրի օրինակը և պայմանագրի կատարման ապահովումը, ինչպես նաև armeps.am տիրույթում ընդունել պայմանագրի շնորհումը: Ընկերության կողմից armeps.am տիրույթում ընդուվել է պայմանագրի շնորհումը, սակայն տաս աշխատանքային օրվա ընթացքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն չի ներկայացվել»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. **<u>«Վանի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը դիմել է «Վանի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.12.2017թ. թիվ 03/26-3/23873-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Ղազար Գրիգորյանը և ներկայացուցիչ Սաթենիկ Ալիբեկյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/77 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2017թ. թիվ 03/26-3/23873-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 15.12.2017թ. թիվ 01/61-28081 գրությունը, «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր), «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 13.11.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4, 16.11.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 և 13.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, Պատվիրատուի՝ 13.11.2017թ. և 28.11.2017թ. «Վանի» ՍՊԸ-ին ուղարկված ոչ ավտոմատ ծանուցումները, armeps.am համակարգում պայմանագրի շնորհումը «Վանի» ՍՊԸ-ի կողմից ընդունվելու մասին Պատվիրատուի 05.12.2017թ. ավտոմատ ծանուցումը, «Վանի» ՍՊԸ-ի կողմից Խորհրդին հայտնած կարծիքը.

Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայում՝ ջրաշխարհի մոտ վերգետնյա հետիոտն անցման կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Վանի» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը՝

- 13.11.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով բավարար գնահատված մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որոշել է գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Վանի» ՍՊԸ-ին և

վերջինիս առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերը:

- 16.11.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 3 կետով որոշել է «ԵՔ–ՀԲՄԱՇՁԲ–17/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Վանի» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով նույն արձանագրության 3 կետով ընդունած որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ որոշել է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Վանի» ՍՊԸ-ին:

Այնուհետև, 13.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ 28.11.2017թ. պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել «Վանի» ՍՊԸ-ին՝ գրավոր ոչ ավտոմատ ծանուցմամբ և իր էլ. փոստի հասցեին, առաջարկելով պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում (ավարտը 12.12.2017թ.) պատվիրատուին ուղղված գրությամբ Երևանի քաղաքապետարան ներկայացնել իր կողմից կնքված պայմանագրի երկուական օրինակները և պայմանագրի կատարման ապահովումը, ինչպես նաև armeps.am տիրույթում ընդունել պայմանագրի շնորհումը:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Վանի» ՍՊԸ-ի կողմից armeps.am տիրույթում 05.12.2017թ. ընդունվել է պայմանագրի շնորհումը, սակայն ընկերության կողմից տաս աշխատանքային օրվա ընթացքում (ավարտը 12.12.2017թ.) պատվիրատուին ուղղված գրությամբ պայմանագրի երկուական օրինակները և պայմանագրի կատարման ապահովումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն չի մուտքագրվել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հանձնաժողովը 13.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.3 կետով որոշել է մերժել «Վանի» ՍՊԸ-ի հայտը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 26.12.2017թ. կայացած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընթացակարգի անգործության ժամկետի ավարտից հետո՝ 28.11.2017թ. «Վանի» ՍՊԸ-ին ոչ ավտոմատ

ծանուցմամբ և իր էլ. փոստի միջոցով ծանուցվել է, առաջարկելով պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 12.12.2017թ., Երևանի քաղաքապետարան ներկայացնել իր կողմից կնքված պայմանագրի երկուական օրինակները և պայմանագրի կատարման ապահովումը, սակայն նշված ժամկետում Ընկերության կողմից այն չի կատարվել, թեև վերջինիս կողմից armeps.am համակարգում ընդունվել է պայմանագրի շնորհումը:

Ընկերության տնօրենը ընդունեց, որ Ընկերությունը armeps.am համակարգում ընդունել է պայմանագրի շնորհումը՝ միաժամանակ նշելով, որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 12.12.2017թ. իր կողմից կնքված պայմանագրի օրինակները և պայմանագրի կատարման ապահովումը ներկայացնելու վերջնաժամկետից՝ 12.12.2017թ., մինչև Հրավերի Պայմանագրի նախագծով որպես աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանված 20.12.2017թ., գործնականում աշխատանքների իրականացման համար մնացել էր ընդամենը 8 օրացուցային օր, ուստի Ընկերությունը՝ գնահատելով նշված ժամանակահատվածը որպես նման ծավալի աշխատանքների կատարման համար ոչ իրատեսական, չի ներկայացրել Պատվիրատուի կողմից պահանջված՝ իր կողմից կնքված պայմանագրի և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընկերության տնօրենը հավելեց նաև, որ Պայմանագրի նախագծով նախատեսվել է, որ Պատվիրատուն պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք, ինչից հետո միայն պետք է մեկնարկեին պայմանագրով նախատեսված աշխատանքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այս ուհետ՝ նաև Օրենք) 36-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն

օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

- 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 13-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 20-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին, իսկ 21-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկն ստացած մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

«ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի Հավելված 6-ով նախատեսված կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի նախագծի հավելված թիվ 2 հավելված հանդիսացող «Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայում՝ Ջրաշխարհի մոտ վերգետնյա հետիոտն անցման կառուցման» աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ նշված աշխատանքները մեկնարկում են պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից և ավարտվում են 20.12.2017թ.:

Նույն պայմանագրի նախագծի 3.2.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

Հրավերի՝

- 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:
- 9.6 կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի անգործության ժամկետի ավարտից հետո՝ 28.11.2017թ. Պատվիրատուն «Վանի» ՍՊԸ-ին ոչ ավտոմատ ծանուցմամբ և էլ. փոստի միջոցով առաջարկել է պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 12.12.2017թ., Երևանի քաղաքապետարան ներկայացնել իր կողմից կնքված պայմանագրի օրինակները և պայմանագրի կատարման ապահովումը, ինչը նշված ժամկետում Ընկերության կողմից չի կատարվել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պատվիրատուի կողմից «Վանի» ՍՊԸ-ին վերը նշված ոչ ավտոմատ ծանուցումն ուղարկվել է 28.11.2017թ., իսկ իր կողմից կնքված պայմանագրի օրինակները և պայմանագրի կատարման ապահովումը Երևանի քաղաքապետարան ներկայացնելու համար ծանուցմամբ նախատեսված վերջնաժամկետն է եղել 12.12.2017թ., այսինքն, ըստ էության, աշխատանքների կատարման համար Ընկերությանը տրամադրվել է 8-ից 10 օրյա ժամկետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և

պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

- 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Նկատի ունենալով, որ պայմանագիր կնքելու առաջարկությունը Ընկերությանը ներկայացվել է 28.11.2017., և պայմանագրի հաստատման համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետները՝ Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից հնարավոր չէր պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում՝ մինչև 20.12.2017թ., ապահովել Հրավերով նախատեսված աշխատանքների ողջ ծավալով կատարումը:

Օրենքի 2-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը գնման առարկայի հատկանիշներն են, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ պայմանագրի նախագծով աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկով նման ժամկետ սահմանելով՝ խախտել է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Վանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.12.2017թ. գրությամբ «Վանի» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00412375/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**